



22. ՔԱՉԼԻԿԻ ՀԵՔԻԱԹ

Ժամանակով մարդու մե կնիկ կը մեռնի, ուր ճժկներ՝ տղեն ու
աղջիկ կէղնին էթում: Մարդ կը տեսնա, օր ուր տուն շահող, շա-
հապտող չկա, կը կարգվի, թաժա կնիկ մե կը բերե, էդ խորթ մեր
էթմըներուն յերես լիտա, կը թքու, կը նալըթե, կը ծեծե, շատ հեղ
անոթի կը թողե:

Դարուն օր կէղներ, կնիկ մարդուց գողտուկ զսերմըցու ցորեն
կը բովեր, կէներ աղընձի պես, կը դներ մեկ գեն, մարդ զսերմ կը
տաներ արտ կը ցաներ, սերմ չը բուսեր: Մեկ-էրկու տարի էդ հմաշ
սերմ կը տաներ, արտ կը մներ սև հերկ:

— Կնի՛կ,— կըսե մարդ,— ի՛մալ կէղնի, չըմեն տարի ցանք
կէնիմ, չը բուսի, սարարն ի՛նչ է, չէղնի՛ ծանդր մեղք ունինք, մեր
մեղաց՝ արտ չը բուսի:

— Հալըաթ մեր մեղացն է,— կըսե կնիկ,— օր մեր մեղաց չէղ-
նի, արտն յորի՛ն չը բուսի:

— Բպա ի՛մալ էնինք:

— Ի՛մալ պտի էնիս, տար զքու տղեն դիր մըշ չակոսին, մատ-
ղե, տե՛ս արտն ի՛մալ բուսի:

— Կնի՛կ զավակ, ես ի՛մալ իմ ձեռքով զիմ տղեկիկ մորթիմ,
էղնելո՛ւ բան է:

— Հա՛, վոլա պտի քո ձեռքով զքու տղեն մորթիս, ըպա ի՛մալ
կըսիս, քոմով-քոշով անոթնե մեռմի՛նք, հա՛: Ահը՛ քըզի եղ ու դա-

մակ, ահը՝ քըզի լեսան—սրե, տղեն թըզ չը մնա, լուսուն յելի տար մատղե, բալքի աստված դուռն օղորմութինին բանա վըր մըզի:

Աղջիկ գիմնա զուր պապու մամու խարջուտք, կէրթա աղբոր կըսե.

— Աղբոր՛ մեր պապ լուսուն զքըզի պտի տանե արտ՝ մատղե, օր մեր արտ բուսի: Մեր խորթ մամ հմալ է ավտըզուցի զմեր պապ. ինչ կէնիս, շուտ էրե, ա՛ռ զքու զլուսն ու կորի գիով մե:

Տղեն կտոր մե հաց կը դնե ծոց, փետ կառնե ուր ձեռոր, կը փախնի կէրթա, բսկի լը գինա, թե չո՛ւր կէրթա. գընկնա գար ու դաշտ, քար ու կապան, սար ու ձոր, կէրթա, կէրթա, շատ կէրթա, քիչ կէրթա, դեմ կէն բանձր անվերի սար մե, կը տեսնա էդ սրըմ-րիկ սարի գլուխ բերդ մե կա: Կէրթա էդ բերդի տակ կը կանի, դար-դահով ներս կը մտնա, դա՛ռ դարտակ, ինս ու շինս չկա ի ներս. մեկ լե կը տեսնա օ՛ր աշլաշեր պառավ մե նախիր մե զուն ու շա-նավար, առջ ու առուժ, գել ու աղվես, խոզ ու բարազ չառչեն էց-կած բերեց լցեց դարգահով ներս, զդուռ դրեց վրեն: Տղեն օր զպա-ռավ տեսավ, հոգին էղավ քընց կորեկի մե հատ, բրոեն մաղեր, ակոեք՝ ինչ օր կացին, կըկլուկ աշեքր ճռոթած, թռած վըր գագթին: Զտղեն օր կը տեսնա, կըսե.

— Ծրագով կը գաշենք, անճրագ գտա: Իդա յոթ տարի է, օր ի՞մ ակոեք կը ցավան, աղամորդի մե պետք էր օր զմիսն ուտենք, ակ-ռեքսի աղեկնեն:

Պառավ կրակ կը վառե, կը բերե խոզ մե, շիշ կը զարկե բերան՝ չոռուն կիտա դուա. կը բռնե վըր բոցին, կը շրջմրշե, կէն բջարաբ, կը լնդե՝ ինչ օր մարդ ճնճուղ մը ուտե: Դելնա զդուռ կը դնե վըր-տղին ու կէրթա սար: Պառավ օր կէրթա սար, տղեն գելնա մըշ բեր-դին կը զվոնե, կը տեսնա օր ի՞նչ. ցորենի դեզի պես օսկոռ վըր օսկըռի կուլոնուկ: Տղեն զայլաբուշտ կէզնի, էն մեկ գեն կը տեսնա, օր չաղրուր մե կը շոա, ճկութին օր թաթիս մըշ ջրին, կը դառնա օսկի, զուր ծամեր կը բռնե գեմ, կը դառնա օսկի: Կը մտնա տեղ մե, օր հանդե իրեք հմալ ձի կան, օր կըմինին խալմով քաշած, շուտի՛ ս շը խմի՛ս՝ թամաշա էնիս: Կը տեսնա, օր մեկ ձիու մսուր խոտ է դրուկ, մեկին՝ առվուտ, էն մեկելին՝ քար: Կը վերցու զքար կը թալե դեն, առվուտ կը դնե չառչեւ: Զին աստծու հրամանքով գելնա լեզու:

— Տղա՛,— կըսե ձին,— կտեսնա՞ս զմըզի. պառավն է բերի զմըզի կապի. էն սպիտակ ձին՝ ծով է, էն կարմիր՝ հրեղեն, ես՝ քամեղեն: Շուտ ամեկու պոշեն մեկ-մեկ մազ փրծու դիր ծոցդի, հետդ առ մեկ լեսան, մեկ սանդր, մեկ արծլի, քիչ մե աղ, մեկ փարչ

զուր, թամբ զարկ վրեսի, քաշե դուա, հեծի, օր փախնինք, թե պառվն օր էկավ ըգբըզի հումուզում կուտե, մեր զլուկա լե ո՞՛՛ գինա ինչ օդիաթ խաղաւ:

Տղեն կը քաշե զքամեղեն ձին ի դուա, կը թամբե, կը թռնա ու յալա՛ քամու պես կէրթա: Դուռն օր բաց կը մնա, զուն ու ջանավըր-ներ լե ամեկ դիով մե կը փախնին կորին: Պառավ կը դառնա՝ սարեն գիկա, կը տեսնա օր ի՞նչ՝ դարգեն մշոյ ճխնին բաց, զուն ու ջանա-վար ամեն դիով մե փախած կորած, ձին ու տղեն լե շկան: Կը կատղի, փռիուռ կիտա վըր բերնին, կկլուկ աշքեր կը թռնան ի գագաթ, հմը կը բերե բարւովսոզ կը թամբե, սուր էրկաթ մե կառնե մոտ, կը հեծնա ու գընկնա տոդի յետև: Էն գախ օր կը խտե խողու կողեր՝ խոզ քսան գազ կը թռնա:

Զին կըսե.

— Տղա՛, իշկե, տե՛ս, պառավ չէկա՞վ:
— Վոլա, — կըսե, — հանդե հասվեհաս է:
— Տղա՛, — կըսե, — զլեսան թալ:

Զլեսան օր կը թալե՝ կը դառնա քար ու կապան, քար ու քոա, սար ու ձոր: Պառավ հարի զսար ու ձոր կը կտրե, ուրանք խելի կը հեռեննան: Պառավ օրթե հասվեհաս կէղնի, զսանդր կը թալե, ճամ-պեն կը դառնա հմալ պրակ ու մեշա, օր օձ լը կռնա ճղե: Տղեն ու ձին զմանզիլ ուրանց կառնին: Պառավ էլման հասվեհաս օր կէղնի, տղեն զարծին կը թալե, սար ու ձոր յըմեն կը դառնան ուրագ ու մկրատ, մըլի ու դանակ, գերընդի ու մանկղոն, զպառվու յոտներ կէնին յարալու-փարալու, արուն ինչ օր հեղեղ գելնա կէրթա: Խել մե կէրթան, պառավ էլման հասվեհաս կէղնի:

— Տղա՛, — կըսե ձին, — զաղ ցփնե վըր ճամպում:

Աղ օր կը ցփնե, կը դառնա աղ ու աղջուր, կը քսվի պառվու բրներ, կսկիծ կը զարկե պառվու սիրտ, հոգին կը մղկտա: Ախըր չարա չէղնի, պառավ կը հասնի:

— Տղա՛, — կըսե ձին, — զփարչ ջուր կոռծե:

Տղեն օր զփարչ ջուր կը կոռծե՝ կըդառնա ծով: Զին, տղեն զու-րանց օր կը թալին ծով՝ պառավ հմա զուր տակի խոզ կը թալե գե-տին, զփիզ կոլրե, կը փրցու, զփոր կը փշե կուռցու, տիկ կը հանե, բերան կը կապե, կը թալե ծով, կը հեծնա զտիկ ու գընկնա տղի յետև: Տղեն կիշկե, օր պառավ հասվեհաս է, կըսե:

— Վոլա էդ անիծուկ էկավ հասավ:

— Տղա՛, — կըսե ձին, — վոլա էլ իմ ձեռքեն բան շելնա, հու-նար մնաց քու թերուն:

Տղեն կը կանչե զուր աստված ու նետ մե կը զարկե պառվու ճակատ, պառավ կաթլափստի մըջ ծովոմ, կը խեղդվի, կազատվին, գելնան ծովափի: Տղեն մազ մե կը քաշե ձիու պոշեն, կը զնե ծոց, ձին կէրթա, ինք գընկնա սար ու ձոր՝ կէրթա: Շատ կէրթա, բիշ կէրթա, կը հանպտի հովվի մե, շերեն կը հանե օսկի մե, կիտա հովվին, կառնի գտո մե, զգառ կը մորթե, կը քոթե, ինք ու հովիկ կէ-փին կուտին, զգառան փոր կը դարտկե, ցին ու մին կը թափե, թա-միզ կը լվա, կը շրջե, կը զնե արե, փշու մե կը սարսրտի, կը զնե զլուկս, զծամեր ծալե զնե տակ, կէղնի քաշիկ, տեսնող կըսեր օր մորեն քաշալ է էղի, զոսկի մատ լե կտոր մե շորով կը կապե ու կէրթա: Կէրթա, կէրթա հհասնի թագավորի քաղաք: Յո՞ւր էրթա, յո՞ւր շէրթա, կէրթա կը կծկի թագավորի պատի տակ: Օր մե թե էրկու հմալ պատի տակ կծկուկ կը մնա: Թագավորի յոտք ու ձեռք կը տեսնան, կըսին յիրարու:

— Էդ քաշալ շը կոնա՞ էղնի թագավորին խաղարած: Տղա', քաշի'կ, կոնա՞ս թագավորի խաղեր արծաս:

— Յորի՞ն շը կոնամ:

Քաշիկ կէղնի խաղարած: Հարի յիրկոմ զխազեր կարծա, յիրկոմ կը բերե էնե ներս, ինք լե կը կծկի մեկ քոշեն: Թագավորի պղտիկ աղջիկ օր մե խաղանոցի զոնեն գընցնա, կը տեսնա, օր քաշիկ զուր գլուխ բացեր է, զուր ծամեր կը սանդրե, կը տեսնա՝ ծամեր օսկու պես կը բրդիտան, էն մեկ ճկութ լե օսկու պես կը փելպստա: Քաշիկ հմա շուտ մե զգառան փոր կէցկի զլուկս, զմատ կը կապե, կը փախսնի մեկ դեն: Թագավորի աղջկա սիրտ գընկնա ի քաշիկ, լե մարդու բան շըսե, կը պահե ուր միտք:

Թագավորին ուրիշ էրկու աղջիկ լե կէղնի. էն թավ մեծ լուսցեր էր, կարգմելու վախտն յընցեր էր. միշնեկին՝ կարդվելու վախտն էր, էն պղտիկ՝ հմա հա՛ հա՛ հասնելու վրա էր:

Աղջիկներ խորուրդ կէնին մըջ ուրանց, գելնան իրեք հատ ձմերուկ կը բերին: էն մեկ ձմերուկ՝ վախտն յընցուկ կէղնի, դարտըկ-վեր էր, օր կը ժխշեն՝ կտեր մեջ կը խշաշեն: էն մեկ՝ հասուկ, ուտելու վախտն էր, էն մեկ լե հասնելու վրա էր: կը զնին մըջ սինուն, մեկ-մեկ դանակ կը զարկին ձմերկներու մեջ կը ճամպին ուրանց հոր: Թագավոր բան շը հասկնա ձմերկներուց, կը կանչե իմաստուն մարդիկ, կը հարցու.

— Իդա ձմերկներ իմ աղջկներն ին ճամպած, ի՞նչ խորուրդք ոմին, ըսեք ընձի:

Իմաստուններ կըսին.

— Թագավոր ապրած կենա, իդա իրեք ձմերկներ քու իրեք աղ-
շըկներն ին: Իդա մեկ ձմերուկ քու մեծ աղջիկն է, ըդրա կարգվելու
վախտն չընցեր է:

Կառնե զգանակ, զմերուկն օր կը կտրե, օղորդման, օր մեջ
դարարվելու էր, մանցած են կտեր:

— Իդա ձմերուկ լի միշնեկ աղջիկն է:

Կը կտրին կը տեսնան, օր ուտելու վախտն է:

— Իդա խակ ձմերուկ լի պղտիկ աղջիկն է:

Կը կտրին, կը տեսնան՝ նոր է առի կարմրել:

Թագավոր ամր կէնե, օր ուր աղջիկներ մեկ-մեկ փեսա ընտրին
ուրանց:

Մեծ աղջիկ կըսե.

— Ես զվազիրի տղին կառնիմ:

Միշնեկ աղջիկ կըսե.

— Ես զնազիրի տղին կառնիմ:

Դոր գիկա պղտկին, պղտիկ աղջիկ կըսե.

— Ես զթաշիկ կառնիմ:

Թագավոր ու ուր կնիկ կը հեռառտին, կըսին.

— Էղա՞ծ բան է, օր Թագավորի աղջիկ զխազարած Քաշիկն
առնե, հմլա բան ո՞ն ի տեսի:

— Զէ՛ օր չէ՛, իլայի ես զթաշիկ կառնիմ, իմն օր կա՛ էդ է,
չկա՛ էդ է:

Թագավոր հրամանք կէնե, կըսե.

— Ուր մուր ուր չերես, տարեք թալեք նեղ ու մութ չօդա մե,
թէրթան ինք ու Քաշիկ ապրին, իմալ կապրին՝ թըղ ապրին:

Աղջիկն ու Քաշիկ կառնին զիրար, կէղնին իրիկ ու կնիկ:

Ժուկ ու ժամանակ մե գընցնա, էն մեկ օր Քաշիկ կըսե.

— Թագավորի՛ աղջիկ, աստծուց խնդիրք կէնիմ, քու պապ
հմալ հիվընդնա, օր ըսկի. մեկ դեղ ու դարմնով աղեկնալ չէղնի
ուրին:

Աստծու խաս ու խուտրաթով թագավոր ծանդր կը հիվընդնա,
գընկնա շլեր: Էլ հեքիմ շը մնա, օր կը բերին, շարա շկա, շըն կոնա
էնի: Ուրիշ ախշըրքեն հեքիմ մը կը բերին, էդ հեքիմ կըսե.

— Հարի Սինամ հավքու կաթ ու Անմահական խնձոր չէղնի,
թագավորին աղեկնալ չկա:

Դալալ կիտան կանշել:

— Թէ հար ո՞ն օր Սինամ հավքու կաթ ու Անմահական խնձոր
կոնա ճարե բերե թագավորին, թագավորն աղեկնա, ուր թագավո-
րութենի կես կիտա ընդոր:

Թագավորի փեսեք — վազիր-նազիրի տղեկներ՝ կըսին.

— էլ ո՞ր օրվա համար ինք պահի զմեր կտրիձութեն, մենք կերթանք բերինք:

Թագավորի թըհել ձիանք կը քաշին դուա, խուրչի մե օսկի կառնին հըտ ուրանց ու գընկնան ճամպա:

Պատիկ աղջիկ կէրթա թագավորի մոտ, կըսե.

— Զի մւ տվեք թաշիկ լե էրթա Սինամ հավքու կաթ ու Անմահական խնձոր ճարե բերե:

Թագավոր զերես կը դառձու մեկ դեն, կըսե.

— Դաշեք հավթափ տակ կապուկ ծոտոտ քուռակ մե կա, տվեք թաշիկին, թէրթա զուր յերես սիվտըկցու:

Թաշիկ կառնե զծոտոտ քուռակ, գելնա քաղքեն դուա, կը թողե մըշ շայիրտանոմ, օր արծա, ինք զմազ կիտա կրակ, հարի աշք խփուց ու բացեց՝ քամեղեն ձին թամրուկ հազրուկ կը կանի ուր յառջն, կը հեծնա ու գընկնա ճամպա: Շատ կէրթա քիլ կէրթա, ծառ մե կը տեսնա, կէրթա, օր էդ ծառի տակ փշումե ըռհաթի, կը տեսնա ծառի վրեն բուն մե կա, մըշ բնին՝ չորս հավքու ձագ, անուշանուշ ուրանց կը ճլվան: Փշումե կը մնա, կը տեսնա օր, վիշապ օձ մե գիկա, քընց ձիթիսծի զերան: Օձ հըտ հասնելուն կը փաթվի ծառնումի ու կը բանձրնա վերե, հավքու ձգեր հմալ ուրուտութ մե կը դնին, հմալ կը ճվճվան, օր քաֆրի շիգար կը փողթի: Թաշու սիրտ թրուտ շի տա, կառնե զուր թուրն ու գընկնա օձի վրեն, զարկ-զարկ-զարկ, զօձ թութնի պես կը բրդե թալե մեկ դեն, ձգերու ճըվ-ճըվուն կը կտրի, ինք լե կը պարկի քնի:

Զգեր կը տեսնան օր ուրանց մամ գժման գիկա, օր կը տեսնա ծառն արձնլվա, կէնե օր գարի տղի վրեն, ձվընե, էնե հազար կտոր, ձգեր հմա վերկից կը բոռան, կըսին.

— Յաման մամո, չէղնի էդ կտրմին դագմիշ էղնիս, էդ էր զվիշապ օձ կտոր-կտոր էրեց, զչոզի մի խլըցուց: Հլա տե՛ս օձու շանդակ քանի փարչա է էրի:

Հավք հմա զթեեր կը բանա, կը կանի տղի զլիսուն, հով կէնե, օր զուր քուն առնե: Տղեն գիմնա, քնուց գելնա, կը զարհուրի էդ հավքի թևերուց: Հավք կըսե.

— Հողածին, ըսկի մը վախենա. իդա քանի տարի է իդա ծառի վրեն բուն կը դնիմ, հավկիթ կածամ, ձագ կը հանիմ, էդ անիծուկ օձ գիկա զիմ ձգեր կուտե: Դու օր զիմ դուշման սպանիր իս, զիմ ձըգուկներ ազատեր իս, քու աղեկութենի տըկեն ի՛մալ յելնամ, յուզե, ի՛նչ գուզիս, յուզե, օր տամ:

Տղեն կըսե.

— Ի՞նչ ըսիմ, ի՞նչ լըսիմ. Հեռում ախշըրքի գիկամ; դեղ ու դուրի կը զվանիմ, լըմ գինա գընկնա՝ ձեռքսի, թե չէ:

— Ի՞նչ դեղ ու դուր, ըստ տեսնամ:

— Ես ֆլան էրկրի, ֆլան թագավորի փեսեն իմ, իմ աներ-թագավոր ծանդր հիվանդ է, էլ ինչ հեքիմներ բերին, էլ ինչ դեղ ու դուր էրին՝ շարա չէղավ, սալըին էրած ին՝ Սինամ հավքու կաթ։ Անմահական խնձոր էղնի, օր զկաթ խմե, զխնձորն ուստե; օր աղեկնա, թե չէ՝ հնար աստծու չկա:

Հավք կըսե.

— Ըշտե ես Սինամ հավքն իմ, օր կամ: Իդա դիմացի բանձր սար կը տեսնա՞ս, էդ լի Սինամա սարն է. էդ սարի վրեն մեկ թաք ծառ կա, էդ ծառի վրեն տարին յոթ խնձոր կը հասնի, ըշտե Անմահական խնձոր օր կըսին՝ էդ է: Մարդ լը կոնա յելնա էդ սար, հողածնի յոտք ըը կոխերե զընդրա հող: Հեծի զքու ձին՝ էրթանք, դուքու ձեռքով քաղե զԱնմահական խնձորներ, դառնանք գանք:

Սինամ հավք ու տղեն գելնան ի Սինամա սար, տղեն ուր ձեռքով կը քաղե զյոթ խնձորներ, կը զնե ուր խուրջին, կը դառնան զիկան:

— Իդա իմ շորս ձգերուց լե մեկ քըզի փեշքեց, տար մորթե, զմաշկն էրե տիկ, բի՛, օր զիմ կաթ կիթիմ մեջ, առնիս տանիս: Լե հմալ տեղ մե տանիս մորթիս, օր ուր ձեն շընկնա իմ անկաջ, թե չէ՝ զըրդի կը ձվըռնիմ, կէնիմ կտոր-կտոր:

Տղեն կը տանե զձագ կը մորթե, զմաշկ կէնե տիկ, կը բերե կիտա Սինամ հավքում: Սինամ հավք լիք կաթ կիտա, տղեն կը շնոխկ-լի, կը հեծնա զուր ձին ու գընկնա ճամպա: Ճամպեն հովիկ մեռաստ գիկա ուրին, հովիկ փառը մե կաթ կառնե, գեղ մե կը մտնա, դուքնե մե քանի մե խնձոր լե կառնե ու գիկա: Օսկե ծամեր վըր փիջանուն, քամեղեն ձին տակ՝ գիկա ու գիկա՝ կը տեսնա ճամպու վրեն էրկու մարդ նստուկ ին: Զիրուց գիջնա, բարե կիտա, բարե կառնե:

— Ախպըրտի՛ք, — կըս տղեն, — հարցնել ամոթ չէղնի, դուք ո՞ն իք, յուստեն գիկաք, յո՞ւր կէրթաք:

Հալբուքի էնի կը ճանշնա զվազիր-նազիրի տղեկներ, մինակ ճանշվըրութեն չի տա:

Կըսին.

— Մենք ֆլան էրկրի ֆլան թագավորի փեսեքն ինք, ընդրա վազիր-նազիրի տղեկներն ինք. մեր աներ ծանդր հիվանդ է, յըն-

կեր ինք էրկրոց-էրկիր՝ դեղ ու դարման կը գաշինք, օր տանինք թագավորին, ուտե, աղեկնա:

— Ի՞նչ դեղ ու դարման է, օր չըք կոցի գտնա:

— Հեքիմ ըսեր է՝ Սինամ հավքու կաթ, Անմահական խնձոր պետք է, օր թագավորն աղեկնա:

— Ախաղըրտի՛ք, ես լե շատ էրկրներ իմ զվոնի, շատ բան է իմ զլառվ յընցի, հեքմութենից լե կը հասկնամ, օր ձեր ուղածն իտամ՝ ի՞նչ կիտաք ընձի:

— Ինչ օր քու լեզուն զվոնի, կիտանք՝ օսկի, արծաթ, շատ յուղե, մը քա՛շի:

— Օսկին ու արծաթ ձըզի էղնի, ես փարի կարոտ շիմ, իմ աղաթն իդա է՝ հան վին օր դեղ տամ՝ պտի իմ դաղմեն վըր ըդրանց յուղուն էղնի:

— Ի՞մալ դաղմա:

— Իդա մատիս մատնիք կը տեսնա՛ք, կը դնիմ կրակ, կը կարմըրցում, ընդրա ակով զձեր յոռթշեր կը դաղմիմ:

— Խարու ինք, ախաղեր, թարիլան մեր աներն աղեկնա:

Օսկեծամ տղեն զէրկուսի յոռթշեր լե կը դաղմե, փարշ կաթն ու դուքնի խնձորներուց քանի մե հատ կիտա: Անմահական խնձորներ ցուց չի տա, մինակ մեկ կաթիլ Սինամ հավքու կաթեն կը կաթըցու մըզ փարշին, կիտա թագավորի փեսեստանուն, ընդոք կէրթան հըտ գրանց ճամպուն, օսկեծամ տղեն լե հըտ ուր ճամպուն:

Վաղիր-նազիրի տղեկներ ուրախ-զուրախ կէրթան կը հասնին թագավորի քաղաքի: Զեն կը ցրվի մըք քաղրին, թե թագավորի փեսերն էկած ին ու Սինամ հավքու կաթ ու Անմահական խնձոր լե բերած ին: Հեքիմներ գիկան թագավորի դիվան, օր քնքնին յիմնան օղորդման Անմահական խնձոր բերած ին փեսեր, թե չէ: Կը քնքնին, կըսին.

— Ինչօր իդա խնձորներն ին՝ ըտոնք հեշ, դուքնի խնձոր ին: Զկաթ կը քնքնին, կըսին.

— Մըշ կաթին ինչօր բան կա, խմցունք թագավորին, տեսնք, ի՞նչ դուս գիկա:

Թագավոր ստական մե կը խմե, հմա՛ օր փշումե կըոհաթի:

Օլոր օր օսկեծամ տղեն գիկա քաղքի յեզր, զձին կը ճամպե, զուր արախշին կը դնե գլուխ, կը դառնա թաշիկ, գիկա տուն. զԱնմահական խնձորներ ու Սինամ հավքու կաթ կիտա կնկան, կըսե.

— Տուր թագավորին թըղ խնձորներ ուտե, զկաթ լե խմե վրեն, տես ի՞նչ կէղնի, արի ընձի ըսեւ

Աղջիկ կը տանե, թագավոր խնձոր մե էրկու կուտե, զկաթ կը խմե, կը սաղնա, կէղնի մորե մեկ:

— Ա' ոչի անզգամ, էդ ո՞ն է բերի զէդ խնձորներ, զէդ կաթ,— կը հարցու թագավոր:

— Քաշիկն է բերի, պապ ջան, Քաշիկ:

Թագավոր ըսկի բանի տեղ լի լը դնե. զերես կը դարձու մեկել դեն:

— Է՛,— կըսե,— գացեք էն Քաշլու թային փշումե չեվելցուցեք, թըղ ինքն ու իդա անզգամ աղջիկ ուտին, լը սատկին:

Աղջիկ լալով կը դառնա գիկա տուն:

Գլնցնի ժուկ ու ժամանակ մե, ուրիշ զորնդեղ թագավոր մե գելնա վըր էդ թագավորին կոփվ: Թագավորի փեսեք՝ վազիրնապիրի տղեկներ ասկար-լաշկար կը ծողվին, գընցնան ի գլուխ, կէր-թան դուշմընի դեմ կոփվ: Տասն օր թե քսան օր կը կովին, թագավորի ասկար կը կոտորվի, վազիրնապիրի տղեկներ ալթ կէղնին կը դառնան չետ: Դուշման օր-ըը-զօր չառեց գիկա, քիչ կը մնա օր մտնա թագավորի քաղաք, զլզլուն գընկնա մըշ քաղքին, միտք կէնին, օր առնին զուրանց էղած-շէղած՝ փախնին:

Քաշիկ զմազ կիտա կրակ, քամեղեն ձին թամբուկ հազրուկ կը կանի ուր չառեց: Զարախճին կը թալե մեկ դեն, կը հագնի զըրիսլի շոր, թուր կը կապե վըրեն, զնետ ու աղեղ կառնե ու կը քշե վըր դուշմընին: Ինչքան օր ինք կը շարդե, տաս էն խըզար քամեղեն ձին դուշմնի ասկար ջարդ ու փշուր կէնե: Թագավորի ասկար սիրտ կառնին ու կը քշին չառեց, զդուշման կը հանին ուրանց էրկրեն: Ֆըմնու աշք օսկեծամ ձիավորի վըրեն կէղնի: Թագավոր կուրախնա, հրամանք կէնե, օր ուր ասկար-լաշկար սըրով գան, ուր չառչեով չընցնան, ինք կանի բալկոն թամաշա էնե: Քաշլու տղեն զուր ձեռք մաղսուս փշումե քեղրթեր էր. եր օր բալկոնի չառչեով գընցնա, թագավոր զուր դասթմալ կը թալե վըր օսկեծամ ձիավորի թեմին, ձիավոր կը վերցու դնե ուր ծոց: Հարի ասկրի չետք գիկա, մութ կը կոսե, տղեն կէրթա տուն, կը պարկի քնի:

Թագավորի կնիկ գախ-գախ հաց ու զատ կը տանե ուր աղջկան ու քաշալ փեսին: Դե, մոր ջիգար է, զուր ավլատ լը կոնա մոռնա: Էդ լուսուն աման մե զատ ու քանի մե հաց կը տանե աղջկան, ներս օր կը մտնա, կը տեսնա՝ օսկե ծամերով ջըհել ջմրիկ, թըրընդաղ տղե մե պարկուկ մըշ տեղին: Էլ հարց ու փորձ չէնե, թե էդ ո՛րն է:

— Հա՛յ քու ժամ կտրիմ, սև կապուկ, սիրող կը պահի՛ս, հա՛, էնոքի առար զբաշալ խաղարած, օր սիրող պահիս, հա՛, սևավոր անամոթ, — կըսե մամ ու կէրթա թագավորի մոտ:

Թագավոր մարդ կը ճամպն զքալիկ կը կանչե դիվան։ Քալիկ զուր արախշին կը դնե վըր ուր փիջուն, խաս շորեր կը հագնի, կէրթա դիվան, գուտի կիտա, կանի Դիվան լիք կէղնի, վազիր, նազիր, մեծ փեսեն, միջնեկ փեսեն, աղջըկներ, թագավորի բու ու ձեռք. ասեղ թալին, գետին լընկներ։

— Տղա, զու ո՞ն իս,— կը հարցու թագավոր։

— Ես Քալիկն իմ,— կըսե տղեն։

— Զէ՛, զու Քալիկ շիս։

Քալիկ կը հանե զուր արախշին, կը դնե գլուխ, զծամեր կը ծածկե արախշու տակ, կըսե։

— Թագավոր ապրած կէնա, մկա ես Քալիկն իմ։

— Հա, վոլա, զու Քալիկն իս։

Տղեն զարախշին կը հանե, կըսե։

— Թագավոր, վազիր, նազիր, շաղամաթ, ես Քալիկն իս։

— Զէ՛, վոլա, մկա զու Քալիկ շիս, ուրիշ մարդ դառձար։

— Թագավոր ապրած կէնա, — կը դառնա տղեն թագավորին, — ես է՛ն իմ, օր զքու դուշման ալթ էրի, շարդ ու փշուր էրի, քու էրկր-րեն քշի զուս, զքրզի, զքու քաղաք աղատեցի։ Ես է՛ն իմ, օր քու բալկոնի ժառչուվ յընցա, զու զքու դասթմալ թալեցիր վըր իմ թևին, թե շըս ավտնա՝ իդա լե քու դասթմալ, հմա՛լ է, հմալ շէ՛։

— Հա, վոլա, օղո՛րդ է, էդի իմ դասթմալն է։

— Ես է՛ն իմ, օր ծուտու ձի մե տվիր, օր էրթենք քըզի Սինամ հալքու կաթ ու Անմահական խնձոր բերենք, բերեցի ու զքրզի լե սաղցուցի։

Մեկել փեսեր էն դիուց։

— Սո՞ւտ է, զԱնմահական խնձոր, զՍինամ հալքու կաթ էղի շը բերեր է։

— Թե օր սուտ է, զէն դուքնի թոռմշուկ խնձորներ ո՞ն տվեց ձըզի, զէն փառշի կաթ ո՞ն տվեց ձըզի, խարեցի, թե ձեր յուզած կաթն ու խնձոր իդոնք են։ Թագավոր ապրած կէնա, թե իմ ըսածներուն շըր ավտընա, ընձի ուրիշ նշան մե լե կա, ընդոր ավտըցեք։ Քըզ քու փեսեր ուրանց շլվըրներ հանին, թե իմ դաշն վըր ուրանց յոռթշներու վըբն էղա՛վ, հանդե ես օղորդ իմ։

Զփեսեստանու շլվըրներ գիջուն, կը տեսնան՝ օղորդման, էրկուսի յոռթշներ լե դաշմուկ էր։ Թագավոր մաթ կը մնա, գելնա կանի՝ զՔալիկի ճակատ կը պագե, կէնե ուրին վազիր, օր մեռնելու օրեր կը մոտենան՝ կը կարգե թագավոր վըր ուր էրկրին, սորա կը մեռնի։

Իրեք խնձոր իշավ էրկնքեն...